

**ԳԵՆՆԱԳԻՈՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՅՈՒ
«ՎԱՍՆ ՆԻՆՈՒԷԱՅԻՈՅ» ՃԱՌԻ ՆԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Գեննաղիոսը եղել է Կ. Պոլսի պարբերաբար 458-471 թթ.: Ըստ Թեոդորեոս Կյուրացու հաղորդման, նա աչքի է ընկել հրաշագործելու կարողությամբ, խստաբարո կենցաղով, վարչական պահանջկոտությամբ: Նա սաղմոս չիմացողներին չէր ձեռնադրում: Պատմվում է, որ երբ նրա պարբերաբարյան օրոք Փրկչին Ջեսի կերպարանքով պարկերած մի նկարչի ձեռքը չորանում է, Գեննաղիոսի աղոթքից հետո ապաքինվում է: Եկեղեցաքաղաքական հարաբերություններում նա չէր փայլում հանդուրժողությամբ. հայրնի է նրա լարված հարաբերությունը անպիտքյան եկեղեցու հետ: Նրա նախաձեռնությամբ է աքսորվել հակաքաղկեդոնական բուռն գործունեությամբ հայրնի դարձած Տիմոթեոս Կուզը, որի նշանավոր Նակաճառությունը պարբերաբար է հերացայում կարևոր տեղ զբաղեցնելու հայ դավանաբանական մարտնչության մեջ:

Գելասիոս պապի (492-496) ժամանակակից Գեննաղիոս Մարսելացու վկայությամբ, Գեննաղիոս Կ. Պոլսեցին «պերճախոսությամբ, սուր մարքով, հներին ընթերցանությամբ ճոխացած մի այր էր, որ մանրամասնորեն մեկնել էր Դանիելի մարգարեությունը, հորինել բազում ճառեր»: Դրանցից եւ ոչ մեկը մեզ չի հասել: Նայրնի է նրա շրջաբերական թողթը «Ընդդեմ սիմոնականության»: Այն հաստատվել է 459 թ. եկեղեցաժողովում: Այդ թղթի փակ առկա են 83 երեցների ստորագրություններ: Սակայն, սա Գեննաղիոսի մեզ հասած միակ երկը չէ: Նրա անունով հայրվածաբար պահպանվել են Ծննդոց, Ելից, Սաղմոսաց, Փոքր մարգարեների, Պողոսի թղթոց մեկնությունները, Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկու քառյակներից հերթումը եւ այլ¹: Նրա անունով հայերեն ձեռագրերում առկա է մի ճառ «Գեննաղա եպիսկոպոսապետի Կոստանդնուպոլսի Վասն նինուէացոցն ասացեալ» խորագրով: Երկի հունարեն բնագրի գոյության մասին հայրնի չէ որեւէ տեղեկություն²: Ճառի բովանդակությունը վկայում է հեղինակի՝ երեսույթի խորքը գնալու, աստվածաբանելու ակներե կարողության մասին: Երկը շարադրված է պարմաբանասիրական, բարոյաբանական մեկնաբանության սկզբունքով: Գեննաղիոսը հոգեխույզի նրբին դիպտմաներով ներկայացնում է Նովնանին համակած հակասական զգացումները, որոնց մեջ գնալով քրիստոսակցական է դառնում Աստծո անսահման ողորմածության հանդեպ մարգարեի անվերապահ հավատը: Ճառն ավարտվում է Նինվեն անխուսափելի կործանումից փրկող պահքի դրվապարտով: Նամեմարությունը պարզում է, որ ինչպես այս, այնպես էլ Նովնան Ոսկեբերանի եւ Եփրեմ Ասորու՝ Նովնան մարգարեին նվիրված ճառերի նպատակն է տարփողել պահքը եւ այն հոգեփրկության միջոց դարձնել:

1 Մարտինոսիական տեղեկությունները տե՛ս CPG 5970-5986:

2 CPG 5986 այն ինչպարակված է Գեննաղիոսի անվավեր երկերի շարքում:

Գեննադիոսի ճառը հրապարակվում է համաձայն ՄՄ թիվ 1525, 3782 ձեռագրերի.

Թիվ 1525 = A

Ճառը ներկայումս ժամանակակից է. Գրիգորիոսի ձեռագրեր: Թիվ 523: Նյու Յորք: Մեծ թանգարան: 47 x 33, 5: Գրությունները ներկայումս: Գրությունները: Տող 33-36: Բնագիր թ. 139ա-142ա:

Թիվ 3782 = B

Ճառը ներկայումս ժամանակակից է. Գրիգորիոսի ձեռագրեր: Ստանդարտիզացված ձևով: Կազմող՝ Աստվածատուր Թեոֆիլակտի: Թիվ 267: Նյու Յորք: Մեծ թանգարան: 46 x 32: Գրությունները ներկայումս: Գրությունները: Տող 46: Բնագիր թ. 37բ-39ա: Այսպես բնագիրը վերջից թերի թերթը ընկած լինելու պատճառով. «...պահքն յարդարին: Վասն զի անյագ///»*:

ՆԱԿԱՌ ՔՅՈՍԵՅԱՆ

* Ձեռագրերի համառոտ նկարագրությունն ըստ՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մարենադարանի», կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, հր. Ա. Երևան, 1965 էջ 575, 1082, նաև «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Ե. Կազմեց Օ. Եգանյան, խմբագրությամբ Յ. Քեօսեանի, Ա Ղազարոսեանի, Կ. Շահե քիյ. Նայրապետեանի, Երևան, 2009:

Աղբյուրներ

* A = 1525, թ. 139ա-142ա

B = 3782, թ. 37բ-39ա

**ԳԵՆԱԴԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊԱԿԼՍԻ
ՎԱՍՆ ՆԻՆՈՒԷԱՑԻՈՑՆ ԱՍԱՑԵԱԼ**

Այսպէս հրամայէ¹ մարգարէն Դաւիթ. «Այս դուռն Տեառն եւ արդարք մտանեն ընդ սա»*: Բայց ես յանդգնելով ասեմ ընդ մարգարէին: Այս է դուռն փրկութեան, քանզի մեղաւորք մտանեն² ժողովալութեամբ եւ արդարք ցուցանին վերստին: Այլ երկուցեալք յառաջիկայիցն զաւրութենէ առ լուրթիւն, եթէ ոչ պահոցս տաւն զիս քարչէր, յորմէ զանց առնել ոչ եմ առանց պատժոց, զի ոչ ոք այսու իրաւքս վազեացէ³, եթէ ոչ որ անկանի: Ի սմա ծուլացաւ Ադամ ի ձեռն ճաշակմանն փոքու, ի բաց թքաւ ի վայելմանէն, եւ մարդն զթզենոյն զգեցաւ տերեւ, եւ, որպէս փայտ անպտուղ, վասն պտղոյն խցաւ ի դրախտէն⁴: Սա⁵ որ առ Աստուած հանիցէ կամուրջ, առանց որոյ ճանապարհորդել զճանապարհն, որ հանէ ի բարձունս, անհնար է: Պահք զհրեշտակս անախտ պահեն եւ մարդկան վշտակից լինին⁶, եւ զորս ի մարմնի անդ գտանէ, անմարմինս ցուցանէ, եւ ըստ կարողութեանն նման գոլ երկնայնոցն⁷ ուսուցանեն, եւ հողոյս հաւասարել հրոյն գոյութեան խրատեն⁸, եւ ի բոցոյ գոյացելոցն հրեշտակաց լինել նմանողս⁹, որոց ի կաւոյս դաստիարակեն: Եւ յապա գա¹⁰ սահմանէ չարեաց ժամանակին եւ ի ժամանակ էիցս չարէ զմեզ ի բաց¹¹ վճարեն, եւ համառաւտ վճիռ երկայնիցն մեղանաց¹², որոց վերակացութիւն մաշէ զախտս եւ զաղախնեայս, որպէս տիկնեայս ցածուցեալս յարդարէ, եւ մարդելուզական ցանկութիւնքն հատանին, եւ զկենցաղոյս իրս յաւթարեցուցանէ առ լաւագոյնսն¹³ եւ զշարժեալ զծուխն մինչեւ յերկինս¹⁴ շրջուցանէ, որ զծաղր անկարգ¹⁵ տեսարանացն արտաքս վարէ: Եւ զաչս վայելչասէրս արտասուաւք¹⁶ բանայ ի զղջումն, որ զանչափ շռայլութիւնսն դիւրաբար ողջացուցանէ¹⁷, որ զվարձկանացն¹⁸ կաքաւիչսն, որ ի հերիովդիանոսացն կարճէ, եւ զվարսն, որ ճգնութեամբն քարոզի¹⁹, հաստատէ, որ աւրինակ է²⁰ յարութեան, ի ձեռն այժմու կարգաւոր յարութեանս²¹ եւ զանձնաւոր սրտից զգերեզմանս բանայ, եւ փողով զգերեալս ի մեղս մեռեալսն յարուցանէ: Որ ամենեցուն քան զամենայն ոք

Աղբյուրներ

* A = 1525, ք. 139ա-142ա

B = 3782, ք. 37բ-39ա

մաւտաւորագոյն բարէխաւս առ Աստուած: Որ ահագին հարցմանցն, զոր տրտմութիւնն Աստուծոյ յանբաւ գլխութիւն փոխարկէ²²:

Այլ զի՞նչ են սքանչելեացս այսորիկ խորութիւնք. չըջապատելով յամեմ զմին հատանելով զպատմութիւնս պահոցն, դադարեցուցից զբանս. Տազնապէր²³ բեմն. ունէր զնինուեացիսն, անբարութիւն չարեացն՝ վիճելով նոցա, յաղթահարեալ նոցա զԱստուծոյ երկայնմտութիւնն: Եւ մեղացն բազմութիւն զաւրանայր²⁴, քանզի առաւելոյր քան զանոխակալութեան պարիսպն ի վեր: Եւ սուր հատողութեանն գեր ի վերոյ քաղաքին ձգեալ լինէր երեքաւրեայ յապաղմամբն եւ կործանմանն: Եւ ապա զՅովնան առաքէր առ նոսա Աստուած՝ տուեալ պատուէր. Այլ եւս երեք աւուրք եւ Նինուէ կործանեացի: Իսկ նորա անգիտակ եղեալ գլխութեանցն Աստուծոյ եւ զի մի՛ անյոյս լինել մեղաւորաց, յանդգնութեամբ ինչ երեւեցաւ՝ ընդդիմանալ հրամանին առ Աստուած: Այս ասելով ընդդէմ այսպէս, եթէ զամենեանն արդէն իսկ կորուսանես, որ ի նմայն, զի այժմ ի նանիր առաքես զիս առ նոսա՝ պատահել ինձ փառաւք, պարտ էր աւետիս ինչ բանիւ տանելով, դու զիս քարոզ թշնամութեան ընտրեցեր առաքելով: Մարդասէր, զայլ ոք ո՞չ գտէր գուշակիչ կորստեան: Ունիս, Տէր, զբազում ծառայակիցս իմ զմարգարէս, առձեռնէ այլ ումէք զհրամանդ զայդ: Թոյլ արայ ծառայիս ի հրամանէդ յայդմանէ հրաժարելով, վասն զի կամիս յամալթ առնել եւ ոչ զՆինուէ կործանել:

Քաջ գիտեմ, եթէ միայն լսիցեն զսպառնալեացդ զահ եւ մանաւանդ ոչ ունելով զպատճառս ինչ յապաղման, այլ նոյնժամայն առ ոտս հատուցումն հասեալ արագագոյն քան զկորուստն առ ի փրկութիւն ցուցանեն զընթացսն, տրտմելովն, լալովն եւ պահելովն, ամաչելով. Ե՞րբ Դու, Տէր, զարարողս խնդրուածոց մերժեցեր եւ կամ դարձեալ յապաշխարութիւն ե՞րբ ոչ գլխացար, ե՞րբ տեսեր, որ արտասուէին եւ զգեստս կաթլոցն յաչացն հանեալ եւ զգլխութիւնդ Քո փոխանակ ոչ հեղեր: Ո՞վ սպացեալ եւ ողորմութեան ոչ պատահեալ ի Քէն: Ո՞վ հեծեալ՝ ոչ եղեւ գլխացեալ ի Քէն: Ո՞վ բախեաց զկուրծս, եւ զգլխութեանց քոց ոչ բացէր զդրունս: Իսկ եթէ զքաղաքն տեսանես միահամուռն ողբացեալս եւ առուս արտասուաց հեղիւն եւ զմեղայն ասելով, եւ զհառաչմունս բիւրուց բիւրուց ելանելով յերկինս վաղվադակի լսիցես, զիա՞րդ ոչ խոնարհեալ գլխացես, մարդասէր: Թերեւս եւ յասելս իմում այժմ վշտակից եղեր նոցա, եւ զնոցա կենդանադրեալ զղջումն ի գլխութիւն փոխարկես: Եւ զի՞ զիս առաքես քարոզել զկատարածն, զի զոր ոչն կամիս առնել, յառաջագոյն ասես, զի մի՛ արասցես:

Զայս ասելով՝ փախեալ ի նմանէ, որ ապաւենն է ամենայն փախուցելոց,

զի որ եհատն ճանապարհ կարծելով փախչել ի նմանէ, այն ածեալ զնա մաւտագոյն, եւ մոռանայ, յորմէ փախչելն կամելով: Եւ այնպէս հասեալ ի ծով, ելանէր ի նաւ՝ կամելով խաբել ի նաւին զնաւավարսն: Այլ զփախուցեալ ծառայն ընկալեալ ծովուն ծառայակցի երեքալեան հնչմամբ գոչէր զբռնութիւնն եւ զալեացն զբռնութիւնսն ժողովէր ընդդէմ նորա իբրեւ սրամտութեամբ խորոցն զմարգարէն ըմբռնէր: Ո՞ր փախչիս, ասէ, զտէրունական զթուլթեանցն զմեծութիւնսն զողանալով եւ զքաղաքին ամբողջ զկեանսն թագուցանելով ի ճանապարհ անկանիս:

Զայսոսիկ եւ այսպիսի ալեւքն որպէս բանեւք աղաղակէր ծովն կապանաւոր զՅովնան, իբրեւ զանձնաւոր գերեզմանի սրտին պահեաց եւ զկենդանարար գերեզման Փրկչին ի փոր կիտին կենդանադրեաց երեքաւրեա, թքանէր մերձ առ նինուեացիսն:

Մտեալ ապա Յովնան ի քաղաքն ընթանայր քարոզելով զճշմարիտն Աստուած եւ զսուտ մահն նինուէացւոց, քանզի ստեաց Յովնան, զի Աստուած ճշմարիտ եղիցի ասելովն, թէ՛ «Ոչ կամիմ զմահ մեղաւորին»: Եւ յայնժամ, որ ինչ պահոցն էր, երեւեցաւ առ Աստուած լսելի: Զի յայս ապաւինեալ ցուցին զապաշխարութիւնն, որ յաճեցոյցն զԱստուած, զվճիռ մահու պատառեաց: Յայնժամ էր ապա աղբերս արտասուաց վերաբերեալս, եւ զալեացն վերազանցութիւնս* ի բարձրութիւնս երկնից: Վասն բարձրութեանն թագաւորն մերկացեալ զծիրանիսն եւ զգենոյր քուրձ փոխանակ ծիրանեացն եւ բեհեզոցն, քանզի զարհուրեցուցանէր զնա երկիւղն անդնդոց: Թագաւորն ի գետնի անկեալ կայր տքնեալ. ո՞վ ոք ի տեսողացն իշխէր կալ ի դահոյս: Տղայքն ի ստինս մարցն գորովէին հոտոտեալ եւ ի կաթլէ միոյ կաթինն արգելեալք լինէին: Ո՞վ ի կատարելոցն ի գինոյ եւ կամ յայլ իրաց է՝ հաղորդել յանձն առնոյր՝ անբանիցն խեղդելով ի ծարաւոյ ջրոյ: Ո՞վ ոք ի բանաւորաց յանդգնէր դնել սեղան:

Ո՞վ պահք վերստին լինելութեան պատճառք:

Ո՞վ ապաշխարութիւն ի զղջումն ածել զԱստուած հաւանեցուցէր:

Ո՞վ պահք, որ կլանող զնինուէացիսն ոչ յապեցուցեր զմահ:

Ո՞վ պահք, որ զայսպիսի սեղանւոյ զգոթիսս զրկեցեր, որ ի թաղմանէ կատարածին զքաղաքն կանգնեցեր: Վայել էր պահաւք, որ առ նինուէացւոցն մեղսն զՏեառն բանսն, որ առ հրեայսն փոխանակաբար գոչէր. Քակեցէք զՆինուէ եւ յերիս աւուրս յարուցից զՆա, ուր էր Յովնան յայնժամ, որ մարգարէացաւ զմարգարէութիւնն սուտ, եւ փախուցեալ ի քաղաքէն, զի

* ՉիքնԲՏ:

Թերեւս փրկութիւն ինքեան շահեսցի, քանզի երկնչէր՝ զոր ինչ ի ծովուն, զայն ի ցամաքի կրել, զի մի արդեւք յերկրորդ կէտն անկանիցի՝ ի դժոխս։ Ապա արտաքոյ քաղաքին էհար զխորանն՝ ի սատակմանէ նոցա փախուցեալ, եւ զկեանս իւր ուրանայր, վասն զի կիզոյ, որ ի տապոյն։ Եւ ապա ի քուն անկեալ կայր ի հրամանէ Աստուծոյ, աւգնական ինչ հովանաւոր ի վերայ գլխոյ նորա ել յանկարծաւրէն ինչ գալարական բնութիւնն ի վերայ նորա հովանի արարեալ Աստուծոյ։ Եւ ի ջերմութեանն տրտմութենէ զովանայր մարդարէն։ Եւ, որպէս ասացի յառաջ, ի դրաց քաղաքին փախչէր եւ դժմենոյն տերեւովն մխիթարէր զգուշագոյն քան զՆինուէի բարկութիւնն Թերեւս զիստն համարէր, վասն զի արագագոյն, քան զդալարոյն ակն ունէր Թարշամելն ի Նինուէի։ Եւ այնպէս ժամադրական կատարածին ժամանակն ի բաց հատանէր առանց վշտաց։ Եւ մարդարէն զիտէր շուրջ զքաղաքաւն զաւղն հարուածոց, ի վեր յերկինս նայէր եւ զփոշին մնայր տեսանել։ Բայց զիարդ կարէր ելանել փոշի, ուր այնքան արտասուք հեղան, այլ փոխադարձումն կործանմանն վասն դարձմանն Նինուէի երեւեցաւ։ Զի որ ի վերայ քաղաքին էր բարկութիւնն այն ի Թառամումն դժմենոյն երեւեցաւ։ Եւ էր տեսանել զմարդարէն ի տրտնջման՝ յանդգնագոյնս ասել առ Աստուած. միայն ի զուր ինչ հրաժարէի ի Քումմէ քարոզութենէն, ո՛վ Տէր՝ անարմատ տեսանելով զգայրացեալ Քո սաստ եւ լի զթութեամբ զսպառնալիսն։ Տեսանելովն հայէի զՔո տրտմութիւնդ ողորմութեամբք լցեալ, եւ ընդէ՞ր առաքեցէր զիս սուտ քարոզ ճշմարիտ Քո զթութեամբդ։ Պատշաճ էր մանաւանդ Նինուէացոցն առ իս լինել գուշակ վասն երեքաւրեա կործանմանն քան ինձ առ Նինուէացիսն յետ երկից աւուրց եղեալ, յոչ եղեալ մահուն այլոց զալէկոծութիւնս սպառնացար եւ զիս կործանեցեր փոխանակ նոցա։

Այլ հակառակս ինչ ասել բարբառել մարդասէրն ոչ թոյլ տայր արդարոյն վասն դատապարտելոցն դատաւոր զաւսոխն կոչելով Նինուէացոցն։ Դու զդժմենիդ ոչս երանեցեր Յովնան, իսկ ես ձեռաւք իմովք ստեղծի զմարդն։ Դու, որ ոչ տնկեցեր եւ զդժմենիդ ընդդիմակաց, իսկ ես, զոր արմատացուցի յերկրի եւ նոքա փոխանակ ոստոյ զձեռս ձգէն յերկինս, եւ ո՞չ ողորմեցայց։ Դու ոչ արբեցուցեր ջուր անյոյս անտառին եղելոյ ի վերայ քո հովանի, ընդ որով ննջէիրն։ Իսկ Նինուէացիքն ոչ ննջէին, եւ գետովք արտասուաց զանձինս ոռոգանէին։

Զայսոսիկ եւ զայսպիսիս ասելով անմեղին յաղազս մեղուցելոյն պահքն յարդարին։ Վասն զի անյաբ²⁵///ելի է Աստուծոյ, որ ի ձեռն ապաշխարողաց պահոց փրկութիւնն։ Յայսոսիկ ի պահս ապաւինեսցուք, եղբարք, որ ամե-

նայնիւ առ ամենայնս յամենայն ժամ լինի: Զի Մովսէս ի ձեռն սորա մարտեաւ ընդ Ամաղեկայ ձեռաւք միայն եւ առանց աղեղան զբռնաւորն զայն ձերբակալեաց, քանզի միայն խաչատեսակաբար ընդդէմ հակառակորդացն, եւ իբրեւ անձնաւոր դժոխք պատերազմնն պարտաւորեալ լինէր: Քանզի լծակից առեալ ունէր կապակցեալ ընդ անձին զաստուածեան մեծայաղթ զաւրովթիւնն: Եւ իբրեւ զբարունակ այգւոյ ձգէր զձեռս եւ երկնային մանգաղաւն զբարբարոսն կթէր: Զողաբար յաւրինէր արդարն զձեռս պտղալից եւ անաւրինաց անկանէին անձինք արտաքս որպէս տերեւ: Ի ձեռն այսր պահոց Յեսու Նաւեա իբրեւ ճեպէր առ արեւմուտս երիւարելով զարեգականն իբր լկամաւ ինչ բանին հրամանին ճնշեալ արար զերիվարովթիւնն: Եւ էր տեսանել յոչիմեքէ այնպէս մերձաւորապէս այնքան հնազանդել տարերն: Զի բազում անգամ եւ յանասնոց զանմուղսն ի սանձահարելն պատժենմուլեզնաբար մատաղական խրոխտութեամբն, զերիսն ծառացուցեալ ոտիւքն զոտսն հարստահարեալ խստութեամբ հակառակ դնեն զգոլն չորքոտանիք ուրացեալ: Իսկ արեգակն այնքան փափկերախ լինէր առ հրամանն իբր ոչ ինչ վերաբերիլ ի ձայնէ ճնշողին զնա հնազանդեցուցանել, այլ ղիւրահաւանապէս երթայր որպէս առ պահս արդարոյն հաւանեալ:

Ի ձեռն այսր պահոց Դաւիթ զԳողիադ սպանանէր առանց սրոյ, զանաստուածն զայն պատերազմող յաղթահարեաց:

Ի ձեռն սորա զրահեսցուք զբարեպաշտ թագաւորն մեր՝ ոչ աղեղամբ եւ նետիւ, այլ աղաւթիւք զնա վառեսցուք, ոչ նիզակ թաւթափելով, այլ զծունկս կրկնելով՝ նիզակ ունելով զթաշն պատուական եւ վահան՝ զերկինս: Յաղաքս նորա աղահեսցուք, զի որ ի վեր երիվարեն զքերովբէսն, ելցէ ի պատերազմ ատեցողաց զխաղաղովթիւն, ելցէ ի պատերազմ Յիսուս, որ ի ձեռն Յեսովայ զգայիացիսն յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր *A* Գեներեա եպիսկոպոսի Կոստանդինուպաւսի ի նինուեացիսն եւ յաղաքս առաջաւորաց պահոց:

Բնագիր *1 A* ասէ ապա փխ հրամայէ: *2 A* մտանելով ի ձեռն փխ մտանեն: *3 B* վազեաց: *4* չիք եւ մարդն ... դրախտէն: *5 B* Ով փխ Սա: *6 B* լինի: *7 B*

նմանութեան կարող գոլ անմարմնոցն փխ կարողութեանն ... երկնայնոցն: 8
A չիք խրատին: 9 A նմանս: 10 B չիք գա: 11 B չիք ի բաց: 12 B մեղաց: 13
B ցամաքեցուցանէ զառաւելագոյնսն փխ իրս ... լաւագոյնսն: 14 B ցերեկոյն
փխ յերկինս: 15 B անարգ փխ անկարգ: 16 B արտաքս փխ արտասուաւք:
17 B առողջացուցանէ: 18 B զվարձաձայն: 19 A քարոզէ: 20 A ասէ: 21 B
կարգաւորութեանս փխ կարգաւորութեանս: 22 A փոխարկեաց: 23 A Տազ-
նապեալ: 24 A զաւրանայր բազմութիւնն: 25 B անյազ /// (չար. թափւած):